ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ АРАКС

N210
ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք,
Հասցե՝ Դրոյի 2,հեռ.՝ (077)99-99-30,էլ.փոստ՝ araqsvagharshapat.armavir@mta.gov.am

«05» դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ,
պարոն Ա.Ղահրամանյանին

Կից Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս (Էջմ.) համայնքի 2016 թվականի դեկտեմբերի 5-ին կայացած ավագանու թիվ 2 նիստի որոշումները:

Առդիր՝ 11 էջ:

Արաքս համայնքի
ղեկավար՝ / / Վ.Գրիգորյան

Կատարող՝ Ք.Դանիելյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Մտից թիվ 112.50/14107-16
«12» 12 2016 թ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Արաքս (Էջմ.) համայնքի
ավագանու 2016թ. դեկտեմբերի 5-ի
թիվ 2 նիստի որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   Զեկուցող՝ Վ.Գրիգորյան

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 78-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   Զեկուցող՝ Վ.Գրիգորյան

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   Զեկուցող՝ Վ.Գրիգորյան

աշխատակազմի քարտուղար՝/ /Ք.Դանիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ АРАКС

ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք,
Հասցե՝ Դրոյի 2,հեռ.՝ (077)99-99-30,էլ.փոստ՝ araqsvagharshapat.armavir@mta.gov.am

5 դեկտեմբերի 2016թ. N 82-Ն

# ՈՐՈՇՈՒՄ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, ավագանին*

*ՈՐՈՇԵՑ՝*

1. *Հաստատել Արաքս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 2 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:*
2. *Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

| *ԱՎԱԳԱՆԻ՝* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| *1. Աստրյան Ա.* | | | |
| *2. Գրիգորյան Գ.* | | | |
| *3. Կարապետյան Ս.* | | | |
| *4. Կիրակոսյան Ս.* | | | |
| *5. Հովսեփյան Գ.* | | | |
| *6. Մանուկյան Ա.* | | | |
| *7. Մելքոնյան Ս.* | | | |

*Արաքս համայնքի ղեկավար՝ / / Վ.Գրիգորյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ АРАКС

ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք,
Հասցե՝ Դրոյի 2,հեռ.՝ (077)99-99-30,էլ.փոստ՝ araqsvagharshapat.armavir@mta.gov.am

5 դեկտեմբերի 2016թ. N 83-Ն

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 78-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին և 3-րդ կետերով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ, 33-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին*

*ՈՐՈՇԵՑ՝*

1. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 78-Ն որոշման մեջ՝ 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:*
2. *Առաջարկել համայնքի ղեկավարին սահմանված կարգով իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:*
3. *Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

| *ԱՎԱԳԱՆԻ՝* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| *1. Ասատրյան Ա.* | | | |
| *2. Գրիգորյան Գ.* | | | |
| *3. Կարապետյան Ս.* | | | |
| *4. Կիրակոսյան Ս.* | | | |
| *5. Հովսեփյան Գ.* | | | |
| *6. Մանուկյան Ա.* | | | |
| *7. Մելքոնյան Ս.* | | | |

*Արաքս համայնքի ղեկավար՝ / / Վ. Գրիգորյան*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի
N 83-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝7500 / յոթ հազար հինգ հարյուր / դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000 /տասնհինգ հազար / դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար / դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար / դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար / դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 1500 / մեկ հազար հինգ հարյուր / դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 / երկու հազար հինգ հարյուր / դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1000 / մեկ հազար / դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլօբյեկտներիքանդմանթույլտվությանհամարտեղականտուրքըսահմանվումէ2500 / երկու հազար հինգ հարյուր / դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11 000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14 000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21 000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30 000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50 000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 7 000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12 000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15 000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22 000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 32 000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 52 000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 / երեք հարյուր հիսուն / դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 / մեկ հարյուր հիսուն հազար / դրամ.

գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000

/ երեսուն հազար /դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման

թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝ սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 / երեք հազար / դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 / յոթ հազար / դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12 000 / տասներկու հազար / դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 18 000 / տասնութ հազար / դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 27 000 / քսանյոթ հազար / դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 40 000 / քառասուն հազար / դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 / մեկ հազար / դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր / դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000/ չորս հազար / դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 7000/ յոթ հազար / դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10 000 / տասը հազար / դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20 000/ քսան հազար / դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղների պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50 000 / հիսուն հազար / դրամ :

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 / քսանհինգ հազար / դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000/ հիսուն հազար / դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 / երկու հարյուր հազար / դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 / հինգ հարյուր հազար / դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 / երկու հարյուր հիսուն / դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 / մեկ հարյուր հազար / դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 / մեկ հազար / դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 / երկու հազար հինգ հարյուր / դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 / մեկ հազար / դրամ.

դ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

10. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 / մեկ հազար / դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 / հիսուն հազար / դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000/ հինգ հազար / դրամ:

13. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000/ տասը հազար / դրամ:

14. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 / երկու միլիոն հինգ հարյուր հազար / Հայաստանի Հանրապետության դրամ.

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 / հինգ միլիոն / Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 / յոթ միլիոն / Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 / տասը միլիոն / Հայաստանի Հանրապետության դրամ:

Սահմանել տեղական վճարների հետևյալ տեսակները՝

15. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10 000 / տասը հազար /Հայաստանի Հանրապետության դրամ :

16. Համայնքապետարանի տնօրինություն և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու կամ հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5 000 / հինգ հազար / Հայաստանի Հանրապետության դրամ :

17. Համայնքապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 5 000/հինգ հազար / Հայաստանի Հանրապետության դրամ:

**աշխատակազմի քարտուղար՝/ /Ք.Դանիելյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ АРАКС

ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք,
Հասցե՝ Դրոյի 2,հեռ.՝ (077)99-99-30,էլ.փոստ՝ araqsvagharshapat.armavir@mta.gov.am

5 դեկտեմբերի 2016թ. N 84-Ն

# ՈՐՈՇՈՒՄ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով*

## *ՈՐՈՇԵՑ՝*

*1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2017 թվականի բյուջեն՝*

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Արաքս համայնքի 2017թ. բյուջեով նախատեսել եկամուտներ՝ ընդամենը 43258.7հազար դրամ:

*Արաքս համայնքի 2017թ. բյուջեով սեփական եկամուտները նախատեսել 11582.8 հազար դրամ:*

*Պետական բյուջեից տրվող դոտացիան՝ 31295.7 հազար դրամ:*

*2017 թվականին հարկերի գծով նախատեսվել է 10302.8 հազար դրամ, որից 180,0 հազար դրամ շենք-շին. գույքահարկ, 6602.3 հազար դրամ հողի հարկ և 3520.5 հազար դրամ փոխադրամիջոցների գույքահարկ: Կանխատեսման համար հիմք է հանդիսացել գույքահարկի և հողի հարկի հաշվարկման և գանձման հաշվարկները:*

*Հարկերը կանխատեսվել են հաշվի առնելով գանձելիության մակարդակը: Հաշվի է առնվել նաև նախորդ տարիների ապառքներից մասնակի գանձելիությունը:*

*Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարների գծով՝ տեղական տուրքեր նախատեսել 560,0 հազար դրամ:*

*Պաշտոնական դրամաշնորհների գծով՝ դոտացիա 31295.7հազար դրամ՝ հիմք «Պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:*

*Այլ եկամուտների գծով նախատեսել 1100,0 հազար դրամ:*

*Եկամուտները ըստ եկամտատեսակների՝ կից հատված 1-ին համապատասխան՝ կից տեղեկություններ:*

*Նախորդ 2015թվականի փաստացի կատարված, 2016 թվականի հաստատված և 2017թվականի նախատեսված եկամուտների համեմատականը կցվում է (համեմատական 1):*

Ծախսեր

Արաքս համայնքի 2017 թվականի բյուջեով ծախսերը նախատեսել՝ ընդամենը 43258.7 հազար դրամ:

Արաքս համայնքի 2017 թվականի բյուջեով նախատեսված ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման կցվում է (հատված 2.3.6):

Համայնքի 2017 թվականի բյուջեի ծախսերը հաշվարկելիս առաջնորդվել ենք 2015թ. բյուջեի փաստացի կատարված ,2016թ. բյուջեի հաստատված և 2017թ. սպասվելիք ծախսերով:

Ծախսերը բաշխվել են՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 01 ԲԱԺԻՆ 6 ԽՈՒՄԲ 1ԴԱՍ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 1500,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

*01 բաժին 6 խումբ 1 դաս՝ «Կոմունալ ծառայություններ» 4213 հոդվածով ընթացիկ ծախս նախատեսել 1500,0 հազար դրամ:*

*01 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ»ծրագրով ընթացիկ ծախս նախատեսել 25774.0հազար դրամ:*

ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 08 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 4200.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ , ԱՅԴ ԹՎՈՒՄ

*08բաժին 2 խումբ 3 դաս՝ «Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ» ծրագրով 4200.0 հազար դրամ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 10 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 4500,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

*10 բաժին 7 խումբ 1 դաս՝ «Սոցիալական հատուկ արտոնություններ» (այլ դասերին չպատկանող ) ծրագրով նախատեսվել է 4500,0 հազար դրամ:*

*Այս ծրագրում ընդգրկվել են սոցիալապես անապահով խավերին մասնակի օգնություն տալու համար ծախսերը: Օգնությունները տրվում են տարին մեկ անգամ՝ համայնքի ղեկավարի որոշմամբ՝ քաղաքացիների դիմումների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:*

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍԿՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ 11 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 7284.7 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

*11 բաժին 1 խումբ 2 դաս՝ « Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ» 7284.7 հազար դրամ: Պահուստային ֆոնդը կարող է օգտագործվել տվյալ տարվա չկանխատեսված ծախսերի համար՝ միայն համայնքի ավագանու որոշմամբ:*

*Նախորդ 2015 թվականի փաստացի կատարված, 2016 թվականի հաստատված և 2017թվականի նախատեսված ծախսերի՝ գործառնական և տնտեսագիտական դասակարգման, դեֆիցիտի, մարման աղբյուրների, առանձին ցուցանիշների համեմատականները կցվում են (համեմատական 2.3.4.5.6)*

*2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:*

| *ԱՎԱԳԱՆԻ՝* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| *1. Ասատրյան Ա.* | | | |
| *2. Գրիգորյան Գ.* | | | |
| *3. Կարապետյան Ս.* | | | |
| *4. Կիրակոսյան Ս.* | | | |
| *5. Հովսեփյան Գ.* | | | |
| *6. Մանուկյան Ա.* | | | |
| *7. Մելքոնյան Ս.* | | | |

*Արաքս համայնքի ղեկավար՝ / / Վ. Գրիգորյան*

# ՈՒՂԵՐՁ

## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ. ԲՅՈՒՋԵԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Ձեր քննարկմանն է ներկայացվում Արաքս համայնքի 2017 թվականի բյուջեն: Արաքս համայնքի 2017 թվականի բյուջեն կազմվել է համայնքի ղեկավարի հնգամյա ծրագրի դրույթներին համապատասխան:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

**Արաքս համայնքի 2017թ. բյուջեով նախատեսել եկամուտներ՝ ընդամենը 43258.7հազար դրամ:**

*Արաքս համայնքի 2017թ. բյուջեով սեփական եկամուտները նախատեսել 11582.8 հազար դրամ:*

*Պետական բյուջեից տրվող դոտացիան՝ 31295.7 հազար դրամ:*

*2017 թվականին հարկերի գծով նախատեսվել է 10302.8 հազար դրամ, որից 180,0 հազար դրամ շենք-շին. գույքահարկ, 6602.3 հազար դրամ հողի հարկ և 3520.5 հազար դրամ փոխադրամիջոցների գույքահարկ: Կանխատեսման համար հիմք է հանդիսացել գույքահարկի և հողի հարկի հաշվարկման և գանձման հաշվարկները:*

*Հարկերը կանխատեսվել են հաշվի առնելով գանձելիության մակարդակը: Հաշվի է առնվել նաև նախորդ տարիների ապառքներից մասնակի գանձելիությունը:*

*Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարների գծով՝ տեղական տուրքեր նախատեսել 560,0 հազար դրամ:*

*Պաշտոնական դրամաշնորհների գծով՝ դոտացիա 31295.7հազար դրամ՝ հիմք «Պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:*

*Այլ եկամուտների գծով նախատեսել 1100,0 հազար դրամ:*

*Եկամուտները ըստ եկամտատեսակների՝ կից հատված 1-ին համապատասխան՝ կից տեղեկություններ:*

*Նախորդ 2015թվականի փաստացի կատարված, 2016 թվականի հաստատված և 2017թվականի նախատեսված եկամուտների համեմատականը կցվում է (համեմատական 1):*

**Ծախսեր**

Արաքս համայնքի 2017 թվականի բյուջեով ծախսերը նախատեսել՝ ընդամենը 43258.7 հազար դրամ:

Արաքս համայնքի 2017 թվականի բյուջեով նախատեսված ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման կցվում է (հատված 2.3.6):

Համայնքի 2017 թվականի բյուջեի ծախսերը հաշվարկելիս առաջնորդվել ենք 2015թ. բյուջեի փաստացի կատարված ,2016թ. բյուջեի հաստատված և 2017թ. սպասվելիք ծախսերով:

**Ծախսերը բաշխվել են՝**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 01 ԲԱԺԻՆ 6 ԽՈՒՄԲ 1ԴԱՍ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 1500,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

*01 բաժին 6 խումբ 1 դաս՝ «Կոմունալ ծառայություններ» 4213 հոդվածով ընթացիկ ծախս նախատեսել 1500,0 հազար դրամ:*

*01 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ»ծրագրով ընթացիկ ծախս նախատեսել 25774.0հազար դրամ:*

ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 08 ԲԱԺԻՆ
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 4200.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ , ԱՅԴ ԹՎՈՒՄ

*08բաժին 2 խումբ 3 դաս՝ «Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ» ծրագրով 4200.0 հազար դրամ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 10 ԲԱԺԻՆ
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 4500,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

*10 բաժին 7 խումբ 1 դաս՝ «Սոցիալական հատուկ արտոնություններ» (այլ դասերին չպատկանող ) ծրագրով նախատեսվել է 4500,0 հազար դրամ:*

*Այս ծրագրում ընդգրկվել են սոցիալապես անապահով խավերին մասնակի օգնություն տալու համար ծախսերը: Օգնությունները տրվում են տարին մեկ անգամ՝ համայնքի ղեկավարի որոշմամբ՝ քաղաքացիների դիմումների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:*

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍԿՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ 11 ԲԱԺԻՆ
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 7284.7 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

*11 բաժին 1 խումբ 2 դաս՝ « Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ» 7284.7 հազար դրամ: Պահուստային ֆոնդը կարող է օգտագործվել տվյալ տարվա չկանխատեսված ծախսերի համար՝ միայն համայնքի ավագանու որոշմամբ:*

*Նախորդ 2015 թվականի փաստացի կատարված, 2016 թվականի հաստատված և 2017թվականի նախատեսված ծախսերի՝ գործառնական և տնտեսագիտական դասակարգման, դեֆիցիտի, մարման աղբյուրների, առանձին ցուցանիշների համեմատականները կցվում են (համեմատական 2.3.4.5.6)*

| *ԱՎԱԳԱՆԻ՝* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| *1. Աստրյան Ա.* | | | |
| *2. Գրիգորյան Գ.* | | | |
| *3. Կարապետյան Ս.* | | | |
| *4. Կիրակոսյան Ս.* | | | |
| *5. Հովսեփյան Գ.* | | | |
| *6. Մանուկյան Ա.* | | | |
| *7. Մելքոնյան Ս.* | | | |

*Արաքս համայնքի ղեկավար՝ / / Վ. Գրիգորյան*